ԽՈՒՊՔ (Թերևս խուփեր)։—25 տուն ք։ 1 ½ ժամ հարաւ Ցէրբքու, ունի փոքր մատուռ մի և գիւղի շուրջն քանի տեղեր հայկական գերեզմաննոց։ մատուռը հողի մէջ շինուած է։ Խարաճանայ վանքի նման վանք մի կայ այստեղ։

ԹՕՓԷ։—18 տուն ք։ 1 ժամ արևմտեան հարաւ Ցէրբքու, սորա արևմուտքը՝ սարի վերայ ուխտատեղի կայ ուր կը դիմեն բաղմաթիւ քրդեր։

ՐՈՒԹԱՆ։—15 տուն ք։ ըստ քրդաց դատարկ կամ մերկ կը նշանակէ, գիւղս մէկ ժամ արևմուտք է Մօլլա-Շամտինի։

ԴՈՒԹԱՂ (երկու թաղ)։—80 տուն թ։ 1 ժամ արևելք Ցատկանայ, ԴուԹաղ Արաճանուոյ աջ ափին վերայ շինուած է, հոս կը նստի գայմագամը, սորա շրջականերն կը նշմարուին շատ մի հնութեան հետքեր։

Այս գիւղս շրջապատած է 1700 թուականներուն մի հաստատուն պարիսպ, սորա բնակիչներն, որպէս ամբողջ Անդաբ, հայ էին, այդ թուականներուն երկու օր Ենի Զերեաց հետ պատերազմած երկու կողմից բաղմաթիւ մարդիկ կոտորած են [1]։

ԷՄՄԷՐ։—60 տուն թ։ ըստ քրդաց ցորենագոյն կը նշանակէ, 1 ½ ժամ արևմտեան հարաւ Ցատկանայ։ Գիւղս հաստատուած են հարուստ Կօլացի թուրքեր, որք վերջին պատերազմից յետոյ գաղթած։ Գիւղիս շրջականերն ևս գտնուած են տապանաքարեր հողի տակ, զորս թուրքեր կը հանեն գետնի տակից՝ շարունակ պեղելով հողը։

---

1. Առանձին ևս ալիտի գրուի ԴուԹաղայ մէջ պատահած մի անցքի մասին։